Կլիմայի հարմարվողականություն

GEFF Green Economy Financing Facility

European Ban for Reconstruction and Deve

ԿԱՆԽԱՐԳԵԼԵ՛Ք ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԸ՝ ՁԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍԸ ԴԱՐՁՐԵ՛Ք ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ և ՇԱՀՈՒԹԱԲԵՐ

Անկախ նրանից՝ Ձեր բիզնեսը զբաղվում է գյուղատնտեսական, մատակարարման շղթայի կամ սննդամթերքի վերամշակման գործունեությամբ, կլիմայի հարմարվողականության մաս կազմող տեխնոլոգիաներում ներդրումներ կատարելը կնպաստի Ձեր բիզնեսի կայունությանը

Դոնորներ՝

GREEN CLIMATE FUND

CIF CLIMATE INVESTMENT FUNDS

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղերից է, որում ներգրավված է երկրի աշխատուժի 30%-ը և, կլիմայի փոփոխության հետ կապված աճող ռիսկերի նկատմամբ համարվում է ամենախոցելին: Հետևաբար, լավ կարգացած գյուղատնտեսական պրակտիկա և ենթակառուցվածքներ ունենալը անչափ կարևոր են ոլորտն իր ամբողջ ներուժով կայուն կերպով զարգացնելու համար:

Ջերմաստիճանի բարձրացումը և անկանխատեսելի սեզոնային անձրևները, գետերի հոսքերի կրճատումը և սողանքները տեղի են ունենում սպասվածից շատ ավելի հաճախ: Այս փոփոխությունների արագացումը և սրացումը կախված է մեր կենսակերպի ընտրությունից և տնտեսական գործունեությունից:

Ինչո՞ւ պետք է գյուղատնտեսական բիզնեսը հաշվի առնի կլիմայի հարմարվողականությունը

- **Գյուղատնտեսության ոլորտը ջրի ամենամեծ սպառողն է աշխարհում:** Ոռոգման ավանդական համակարգերը մեծ քանակով ջուր են պահանջում, ինչը, կարճաժամկետ առումով, հանգեցնում է ծախսերի ավելացման, իսկ երկարաժամկետ առումով՝ հողի էրոզիայի և աղակերծման:
- **Երաշտներն ու առատ անձրևները կարող են վնասել բերքը՝ հանգեցնելով անդառնալի վնասների:** Անկանխատեսելի ապագայի պլանավորման արդյունավետ միջոցները կարող են լինել սերմերի և բերքի պահոցները և ջերմատները:
- **Պարարտանյութերի և թունաքիմիկատների մեծ քանակի օգտագործումը կարող է հանգեցնել ջրի աղտոտման:** Տեխնոլոգիաները, որոնք քիմիական նյութերն ավելի արդյունավետ են հասցնում բույսերին, կարող են օգնել բիզնեսին օգտագործել ավելի քիչ պարարտանյութ ու թունաքիմիկատ, և խուսափել ավելորդ ծախսերից:

Ինչպե՞ս կարող է գյուղատնտեսական բիզնեսը դիմակայել այդ ռիսկերին

Դժվար է կանխատեսել գյուղատնտեսական բիզնեսի դիմադրողականությանը սպառնացող բնական երևույթները: Սակայն դրանց դիմակայելուն պատրաստված լինելը կարող է նվազեցնել բիզնեսին հասցվող անդառնալի վնասի ռիսկը: Ջրի, հողի և այլ հասանելի ռեսուրսների օգտագործման օպտիմալացումը կարող է էապես բարելավել ոչ նորմալ և ատիպիկ եղանակային պայմաններին հարմարվելու բիզնեսի կարողությունը:

Հայկական շուկայում բազմաթիվ են այն տեխնոլոգիաները, որոնք կարող են օգնել բիզնեսին դառնալ ավելի կայուն և շահութաբեր: Կլիմայի փոփոխությունից տուժած յուրաքանչյուր բիզնես կարող է սկսել ներդրում կատարել այն տեխնոլոգիաներում, որոնք մեծ նշանակություն ունեն իրենց գործունեության համար:

GEFF-ի կողմից ֆինանսավորվող կլիմայի հարմարվողականության տեխնոլոգիաներ

Հողօգտագործման կայուն կառավարման նախապես հաստատված տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են հողի էրոզիայի նվազեցմանը

Հողի նախապատրաստում և ցանք

- Հողի փխրեցնող մեքենա
- Մուլչապատող մեքենա
- Անիվների ճնշման կենտրոնական կարգավորիչ
- Անվար ցանքի մեքենա
- Թմբուկավոր կոծկիչ
- Հեղուկ գոմաղբի ցրիչ

Եգիպտացորենի մշակման տնտեսության օրինակ

Անվար ցանքի սարքավորումների համալիր (տրակտոր և կցորդիչներ), 125,000 Եվրո

- ✓ Բերքատվության աճ 48%-ով
- ✓ Վառելիքի ծախսի կրճատում 43%-ով
- ✓ Տնկման համար սպառվող սերմերի քանակի նվազում 10%-ով

Ջերմատնային տնտեսության օրինակ

1 հա երկշերտ փքվող թաղանթով հիբրիդային սերնդի ջերմատուն (հիդրոպոնիկ մշակություն), 900,000 Եվրո

- ✓ Ոռոգման ջրի և պարարտանյութերի քանակի նվազում 45%-ով
- ✓ Բերքատվության աճ 28%-ով
- ✓ Բնական գազի սպառման կրճատում 16%-ով

Նախապես հաստատված ջրախնայող տեխնոլոգիաներ ջրի սակավությունը նվազեցնելու համար

Ոռոգում

- Ջերմատներ
- Կաթիլային ոռոգում
- Ներհողային կաթիլային ոռոգում
- Ցողացիրներով ոռոգում

Բողկի աճեցման տնտեսության օրինակ

Տնտեսությունում տեղադրված ցողացիր (սպրինկլերային) ոռոգման համակարգ 13 հա հողակտորի համար, 10,800 Եվրո

- ✓ Բերքատվության աճ 20%-ով
- ✓ Պոմպի էլեկտրաէներգիայի սպառման նվազում 25%-ով
- ✓ Ոռոգման ջրի և պարարտանյութերի քանակի նվազում 35%-ով

Ջրի վերաօգտագործում և վերամշակում

- Անձրևաջրերի հավաքման բաքեր
- Աերատորներ

Ձկնաբուծարանի օրինակ

Աերատորներ 1.1 հա ջրամբարի համար, 22,400 Եվրո

- ✓ Արտադրության (խտության) աճ 200%-ով
- ✓ Քաղցրահամ ջրի սպառման նվազում 70%-ով
- ✓ Ապրանքի որակի բարելավում

Լվացում և մաքրում

- Կիսապրոֆեսիոնալ լվացող-քամող մեքենաներ
- Պրոֆեսիոնալ լվացող-քամող մեքենաներ
- Պրոֆեսիոնալ ծավալային լվացող-քամող սարքավորում

Հյուրանոցային բիզնեսի օրինակ

Պրոֆեսիոնալ լվացող-քամող մեքենաներ 25 կգ հզորությամբ, 7,200 Եվրո

- ✓ Ջրի սպառման կրճատում 25%-ով
- ✓ Լվացքի տևողության կրճատում 30%-ով
- ✓ Լվացող միջոցների քանակի կրճատում 12%-ով

Առկա տեխնոլոգիաներին մանրամասն ծանոթանալու համար, այցելե՛ք **Կանաչ տեխնոլոգիաների ցանկի** կայքը:

Բիզնեսի համար կլիմայի փոփոխություններին դիմակայելու ինչպիսի՞ այլ տեխնոլոգիաներ գոյություն ունեն

- **Վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործում.** Արևային էներգիան էներգիայի ամենամաքուր աղբյուրն է, և կարող է նպաստել օդի և միջավայրի աղտոտվածության նվազեցման, ինչպես նաև հանգեցնել կոմունալ ծախսերի կրճատման:
- **Մշակաբույսերի դիվերսիֆիկացիա և ցանքաշրջանառություն.** Ավոտ արտադրող բույսերի մշակման դեպքում, օրինակ ոլոռ ու լոբի, այս սննդանյութի վգալի քանակությունը կարող է հարստացնել հողը:
- **Վառելիքի այլընտրանքային աղբյուրների օգտագործում.** Բույսերի և կենդանիների թափոններից ստացված կենսավանգվածը կարող է վերածվել էներգիայի և այլ ավելացված արժեքով արտադրանքի:

Ինչպե՞ս կարող է GEFF–ն աջակցել գյուղատնտեսական ոլորտին

Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագիրը կամ GEFF–ը ՎՋԵԲ-ի ծրագրերից է, որն աջակցում է բիզնեսներին դառնալ ավելի մրցունակ և կայուն՝ խրախուսելով **ներդրումները կանաչ տեխնոլոգիաներում և նախագծերում:**

GEFF-ն առաջարկում է ֆինանսավորում, որը նպաստում է ավելի լավ ապագա ունենալուն: Մեր **Գործընկեր ֆինանսական կազմակերպությունների** միջոցով առաջարկվող GEFF-ի ֆինանսավորումը կարող է օգտագործվել՝ ձեռք բերելու վերոնշյալ բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաներ, ինչպես նաև ներդրումներ կատարելու կանաչ նախագծերում, օրինակ՝ Ձեր ֆերմերային տնտեսությունում արևային էլեկտրակայանի տեղադրումը:

Ձեր ներդրումները ֆինանսավորելու համար GEFF–ն ունի երկու մոտեցում՝

Նախապես հաստատված ներդրումներ: Եթե արդեն գիտեք, թե որ տեխնոլոգիայում եք ցանկանում ներդրումներ կատարել, կարող եք փնտրել մեր **Կանաչ տեխնոլոգիաների ցանկի** կայքում: Տվյալների այս առցանց շտեմարանը պարունակում է մինչև 300,000 ԱՄՆ դոլար արժողությամբ (կամ համարժեք այլ արժույթ) կանաչ և բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաներ, որոնք կանաչ ֆինանսավորման համար նախապես հաստատում են ստացել:

Գնահատում պահանջող ներդրումներ: Եթե Ձեվ հետաքրքրող ներդրումը համալիր ներդրում է և պահանջում է հատուկ մոտեցում, ապա կարող եք դիմել **ԱՆՎՃԱՐ** տեխնիկական աջակցության: GEFF-ի խորհրդատուները կտրամադրեն փորձագիտական խորհրդատվություն՝ որոնելու Ձեվ համար առավել համապատասխան կանաչ տեխնոլոգիաներն և ծառայությունները, որոնք ենթակա են ֆինանսավորման GEFF ծրագրի շրջանակներում:

GEFF-ի ֆինանսավորումից օգտվելու համար Ձեր քայլերը՝

I. Ընտրե՛ք Ձեր բիզնեսի կարիքներին համապատասխան ԿՀ բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաներ՝ այցելելով **Կանաչ տեխնոլոգիաների ցանկի** կայքէջ՝ **techselector.com/armenia** կամ ուղիղ կապ հաստատե՛ք շուկայի մատակարարների հետ:

II. Ամփոփե՛ք **Ձեր ներդրման տեխնիկական և ֆինանսական պահանջները**

III. Դիմե՛ք **Գործընկեր ֆինանսական կառույցներին** (ԳՖԿ-ներ) ֆինանսավորում ստանալու համար **ebrdgeff.com/armenia/am/financing**

IV. Անհրաժեշտության դեպքում, ստացե՛ք **անվճար խորհրդատվություն և նախագծի գնահատում** GEFF-ի փորձառու մասնագետների կողմից

V. Ստացե՛ք **ֆինանսավորումը վարկի կամ լիզինգի միջոցով**

VI. Ներդրե՛ք **տեխնոլոգիան**

VII. Օգտվե՛ք **էներգիայի խնայողությունից,** և որոշ դեպքերում նաև այլ **ֆինանսական օգուտներից**

Սիրով պատրաստ ենք պատասխանել Ձեր բոլոր հարցերին:

GEFF-ը Հայաստանում
ՀՀ, ք. Երևան | Հանրապետության 62 փողոց, բն. 101
armenia@ebrdgeff.com | +374 10 542 721 | www.ebrdgeff.com/armenia